

ՏՈՒԳԱՆԱԳԻՐ ԵՄ ՍՏԱՑԵԼ

Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ

ԱՅՑԵԼԵՔ LACOURT.ORG



GET HELP WITH YOUR TICKET

Ձեր տոմսակի հարցով օգնության համար այցելե՛ք: LACourt.org

欲获取罚单帮助 请登录: LACourt.org

교통 위반 티켓에 대한 도움을 받으십시오: LACourt.org

Hãy nhờ giúp về giấy phạt của quý vị tại: LACourt.org

ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՀԱՅՑԻ ԴԱՐՊԱՍ

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ՝ ՁԵՐ ԳՈՐԾՈՎ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՆԻՍԻՆ ԹԱՐԳՄԱՆԻՉ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԼԵՔ LACOURT.ORG

ԻՍՊԱՆԵՐԵՆԻ ԴԵՊՔՈՒՄ ԹԱՐԳՄԱՆԻՉ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԻՔ ԶԿԱ

Ինչպե՞ս կարող եմ օգնել Ձեզ



*** ԿԱՐԵՎՈՐ ***

■ Ձեր տուգանագրին նշված վճարման վերջնաժամկետն ու դատավորի առջև ներկայանալու ամսաթիվը նույնը չեն:

■ Մինչև վերջնաժամկետի օրը, կամ հետագա որևէ այլ օր քայլ չձեռնարկելու դեպքում Ձեր նկատմամբ կարող է կիրառվել տուգանքի ավելացում, վարորդական իրավունքի առկախում և հավելյալ \$300 քաղաքացիական տույժ՝ ըստ Քրեական

ՏՈՒԳԱՆԱԳՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ.

■ **ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՏՈՒԳԱՆՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ (TRAFFIC PAYMENT PLAN, TPP).** Ձեր տուգանագիրը կարող է ենթակա լինել TPP-ի՝ առանց դատարանի գնալու: Գրանցվե՛ք LACourt.org-ում, կամ երթևեկության դատարանի սպասարկման որևէ այլ կետում:

■ **ՎՃԱՐԲԻ ՑԱՆԿԱՑԱԾ ՎԱՅՐՈՒՄ.** Երթևեկության դատարանի սպասարկման կետերի ցանկը գտնելու համար այցելե՛ք LACourt.org:

■ **ԱՎՏՈՄԱՏ ՇԵՌԱՆՈՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ.** Ձեր տեղական հեռախոսահամարը գտնելու համար այցելե՛ք LACourt.org:

■ **ՓՈՍՏ.** Լրացրե՛ք վճարման կտրոնն ու ուղարկե՛ք "BAIL AMOUNT"-ը (ԳՐԱՎԱԳՈՒՄԱՐԸ)՝ վճարելի "LA Superior Court"-ին:

■ **ՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ ԿԱՄ ՎՃԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԵՏԱԶԳՈՒՄ ԽՆԴՐԵՔ.** Այցելե՛ք LACourt.org, ստուգելու՝ արդյո՞ք իրավունակ եք մեկ անգամ 60 օրով հետաձգման:

■ **ԽՆԴՐԵՔ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ.** Կարող եք որակավորվել, եթե.

- Այս տուգանագրից հետո 18 ամսվա ընթացքում գրված որևէ տուգանագրի համար երթևեկության դասընթաց չեք հաճախել;
- Ձեր արագությունը սահմանված առավելագույն արագությունից 25 մղոն/ժամով կամ ավելի բարձր չէր;
- Խախտումը շարժման (վարելու) հետ կապված խախտում է;
- Դուք կոմերցիոն մեքենա չէիք վարում կամ վտանգավոր նյութեր չէիք տեղափոխում; և
- Դուք վավեր վարորդական իրավունք ունեք:



ՈՒՂՂՄԱՆ ԱՊԱՑՈՒՅՑ. Ուղղված յուրաքանչյուր խախտման համար ներկայացրե՛ք ուղղման ապացույց և \$25.00: Ձեքերը վճարելի են "LA Superior Court"-ին: Ուղղման ապացույց կարող եք ստանալ իրավապահ ցանկացած գրասենյակում, աշխատանքային ժամերին: Ուղղման ապացույցը, վճարման կտրոնն ու վճարումն ուղարկե՛ք փոստով, տրամադրված վերադարձի ծրարով:

■ **ԳՆԱՑԵՔ ԴԱՍԱՐԱՆ.** Եթե Ձեր Ծանուցագրի "BAIL AMOUNT" (ԳՐԱՎԱԳՈՒՄԱՐ) վանդակում "SEE BELOW" (ՏԵ՛Ս ՍՏՈՐԵՎ) նշումը կա, ապա պարտադիր կերպով պետք է ներկայանաք դատական պաշտոնյային: "Due Date-ին" (Նշանակված օրը), կամ նախքան այդ օրը, այցելե՛ք LACourt.org և մեղադրանքի ներկայացման նիստ նշանակեք, կամ գնացե՛ք երթևեկության դատարանի ցանկացած տեղամաս:

■ **ԽՆԴՐԵՔ ՀԵՏԵՎՅԱԼԸ.**
 ■ Վճարունակության եզրակացություն;
 ■ Հանրօգուտ աշխատանք (գործակալությունը վարձ կարող է գանձել); և
 ■ Մաս-առ-մաս վճարման ծրագրեր: Մեղադրանքի ներկայացման նիստ նշանակելու, կամ հավելյալ տեղեկատվության համար այցելե՛ք LACourt.org, կամ գնացե՛ք երթևեկության դատարանի ցանկացած տեղամաս:

■ **ՎԻՃԱՐԿԵՔ ՁԵՐ ՏՈՒԳԱՆԱԳԻՐԸ.** Ըստ Կալիֆոռնիայի Դատարանի կանոնների (California Rules of Court, CRC) կանոն 4.105-ի, Դուք կարող եք դատական պաշտոնյայի առջև ներկայանալ առանց գրավագումար մուծելու, որոշ բացառություններով: Կանոնին ծանոթանալու համար այցելե՛ք www.LACourt.org/page/EXGV-CRC4105: Որոշե՛ք՝ ի՞նչ կարգի դատ եք ցանկանում ունենալ.

■ **Դատ՝ դատարանի դաշիժում.** Դուք և ոստիկանը ներկայանում եք դատարան: Մեղադրանքի ներկայացման նիստ նշանակելու համար այցելե՛ք LACourt.org, կամ գնացե՛ք երթևեկության դատարանի ցանկացած տեղամաս: Մեղադրանքի ներկայացման նիստ նշանակելու համար գրավագումար մուծելու կարիք չունեք: Ձեր դատը կնշանակվի մեղադրանքի ներկայացման նիստին:

■ **Դատ՝ Հայտարարագրով.** Դուք և ոստիկանը գրավոր ներկայացնում եք՝ ի՞նչ եք ցանկանում, որ դատարանը գիտենա տուգանագրի մասին: Այս տարբերակը CRC-ի կանոն 4.105-ի բացառություն է: Դատարանին պետք է մուծեք որչ քան գրավագումարը: Լրացրե՛ք այս ծանուցագրին կից ներկայացվող վճարման կտրոնը, ընտրե՛ք "Trial by Declaration," և այն, Ձեր չեքի հետ մեկտեղ, փոստով ուղարկե՛ք նշված հասցեով: